ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 մայիսի 2023 թվականի N 781 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 18-Ի N 513-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները, ինչպես նաև «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ և 12-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությանը գումար հատկացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 1515-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 513-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները.

1) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«3. Ընկերության պետական սեփականություն հանդիսացող 100 տոկոս բաժնետոմսերի փաթեթի կառավարման լիազորությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը (այսուհետ՝ լիազոր մարմին):».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 6.1-ին և 6.2-րդ կետերով՝

«6.1. Հաստատել «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության նպատակների, կորպորատիվ կառավարման և հաշվետվողականության նկատմամբ կիրառելի պահանջները՝ համաձայն N 8 հավելվածի:

6.2. Լիազոր մարմնին հանձնարարել «Բաժնետիրական ընկերությունների մասին» օրենքի 67-րդ հոդվածով սահմանված լիազորությունների սահմաններում մինչև 2023 թվականի օգոստոսի 1-ն ապահովել ընկերության կանոնադրության փոփոխության հաստատումը, օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցումը և սույն որոշման N 8 հավելվածի կատարումը, այդ թվում՝ ընկերության գործունեության նպատակները, կորպորատիվ կառավարման և հաշվետվողականության նկատմամբ կիրառելի պահանջները և միջազգային հեղինակություն ունեցող անկախ գործակալության միջոցով տնօրենների խորհրդի անդամների թեկնածուների հավաքագրման կարգն ու ընտրության չափանիշները՝ ընկերության կանոնադրությունում ներառելու միջոցով:».

3) որոշումը լրացնել նոր՝ N 8 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալում համալրումներ չեն կարող իրականացվել և «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումներ» ոչ հրապարակային մասնագիտացված պայմանագրային ներդրումային ֆոնդի փայերի ձեռքբերման վերաբերյալ նոր ներդրումային պայմանագիր չի կարող կնքվել մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի ապրիլի 18-ի N 513-Ն որոշման N 8 հավելվածի պահանջներին «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» և «Ձեռնարկատեր+Պետություն հակաճգնաժամային ներդրումների կառավարիչ» փակ բաժնետիրական ընկերությունների կանոնադրությունների ամբողջական համապատասխանեցումը: Սույն կետը չի

տարածվում «Այգ-1» արևային ֆոտովոլտային ծրագրի իրականացման նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1986-Ն որոշմամբ հաստատված դեպքերում ընկերության կանոնադրական կապիտալի անշարժ գույքով համալրման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 30-ի N 434-Ն որոշմամբ հատկացված միջոցների հաշվին Ֆոնդի կողմից իրականացվող ներդրումային ծրագրերի նկատմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.05.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ